



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՍԱՐԿԱՄԱԳԱՅ ՁԵՆՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԼԵՆՏԵՅԼԻ Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ

Համաձայն մեր եկեղեցւոյ տօնացոյցին, Շաբաթ, 26 Դեկտեմբերը տօնն է քրիստոնեայ եկեղեցւոյ առաջին նահատակին՝ Ս. Ստեփանոս Նախասարկաւագին:

Սուրբ Ստեփանոսի տօնին առթիւ, Կիրակի, 26 Դեկտեմբերին Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ Ս. Պատարագի ընթացքին, Սուրբ Ստեփանոսի յիշատակը պիտի նշուի եւ հոգեւոր հայրերը իրենց քարոզներուն մէջ վեր պիտի առնեն Ստեփանոս Նախասարկաւագի նահատակութեան իմաստը:

Սուրբ Ստեփանոսի տօնը տօնն է նաեւ մեր բոլոր սարկաւագներուն:

Այս առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարիտրոսեան, Ս. Պատարագ պիտի մատուցանէ, սարկաւագաց ձեռնադրութիւն պիտի կատարէ եկեղեցւոյ երկարամեայ սպասարկուներուն եւ օրուան յատուկ պատգամը պիտի փոխանցէ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

PRELATE TO CELEBRATE DIVINE LITURGY AND ORDAIN DEACONS AT ST. MARY'S CHURCH

Saturday, December 25th, 2010, is the feast of St. Stephen the first deacon and Proto-martyr.

On Sunday, December 26th, the feast of St. Stephen, which is also a celebration of deacons, will be commemorated in all Prelacy churches during Divine Liturgy, with pastors extolling the life and virtues of St. Stephen.

On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy, deliver the sermon, and ordain deacons at St. Mary's Church in Glendale.

ԼԻՆՍԻ ՀԻՄՆԱՐԿԸ ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ՏՈՒԱՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՄԹԻՒՆ ԿԱՏԱՐԵՑ ԹԵՄԻՍ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Ազգային Վարչութիւնը, եւ Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինը այսու սրտի անհուն գոհունակութեամբ կը յայտարարեն, որ այս տարի եւս, հաւատարիմ մնալով տարիներու իր բարեսիրական աւանդութեանց՝ Լինսի Հիմնարկը, իշխանական նուիրատուութիւն մը կատարեց Թեմիս Ազգային Վարժարաններուն: Նուիրատուութեան ընդհանուր գումարն է մէկ միլիոն տոլար, բաշխուած հետեւեալ դպրոցներուն ու մանկամսուրներուն.-

Ազգային Մեսրոպեան երկրորդական վարժարան
Ազգային Ֆերահեան երկրորդական վարժարան
Ազգային Ռոզ եւ Ալեք Փիլիպոս երկրորդական վարժարան
Ազգային Վահան եւ Անուշ Շամլեան վարժարան
Ազգային Արի Կիրակոս Միլասեան վարժարան
Ազգային Գռուզեան-Չաքարեան-Վասպուրական վարժարան
Ազգային Լեւոն եւ Յասմիկ Թալեան մանկամսուր
Ազգային Ռիչըրտ Թիւֆէնքեան մանկամսուր

Առաջնորդ Սրբազանը, Ազգային Վարչութիւնն ու Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինը այսու շնորհակալութիւն կը յայտնեն Լինսի Հիմնարկի տնօրէնութեան ու պատասխանատուներուն, որոնք ընդառաջեցին մեր խնդրանքին եւ անգամ մը եւս օժանդակութեան ձեռք երկարեցին մեր վարժարաններուն: Այս յատկացումները պիտի ծառայեն մեր դպրոցներու բարգաւաճման ծրագիրներու իրականացման:

»Շնորհակալ ենք Լինսի Հիմնարկին, ամանորի ու Ս. Ծննդեան տօներու նախօրեակին կատարուած այս նուիրաբերումին համար. Լինսիի հաստատած այս բարի աւանդութիւնը մեծապէս կը նպաստէ մեր վարժարաններու բարելաւման ծրագիրներուն իրականացման, որուն համար, մենք ու կրթական պատասխանատուները երախտապարտ ենք իմնարկի վարիչներուն«, ըսաւ Առաջնորդ Սրբազանը:

THE LINCY FOUNDATION MAKES A ONE MILLION DOLLAR ALLOCATION TO PRELACY SCHOOLS

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, Executive Council, and the Board of Regents are pleased to announce that The Lincy Foundation has yet again made a generous donation of one million dollars to Prelacy Schools.

The contribution was allocated to the following schools:

Armenian Mesrobian School
Rose and Alex Pilibos HighSchool
Ferrahian High School
Vahan and Anoush Chamlian School
Ari Guiragos Minassian School
Krouzian-Zekarian-Vasbouragan School
Levon and Hasmig Tavlian Pre-School
Richard Tufenkian Pre-School

The Prelate, Executive Council, and the Board of Regents convey their thanks to The Lincy Foundation for this latest allocation, which will greatly contribute to the advancement of our Prelacy Schools. "We are grateful to The Lincy Foundation for their past donations and for this most recent contribution made on the threshold of the New Year and Christmas. The Lincy Foundation has had and continues to have an invaluable role in the progress of our schools, and we are ever thankful for their support", said the Prelate.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ԵՂԱԻ ՏՈՔԹ. ՄԱՅՔԸԸ ՅԱԿՈԲԵԱՆԻ ՅՈՒՂԱՐԿԱՌՈՐՈՒԹԵԱՆ

Ուրբաթ, 10 Դեկտեմբերին, իր մահկանացուն կնքեց Տոքթ. Մայքըլ Յակոբեան, որ մեծ ծառայութիւն մատուցած է հայութեան ու մարդկութեան, հայկական ցեղասպանութեան մասին իր պատրաստած վաւերագրական ժապաւեններով:

Յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 15 Դեկտեմբերին, իր բնակավայրին՝ Թաուզընտ Օքս շրջանին մէջ:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ եղաւ յուղարկաւորութեան արարողութեան եւ խօսք առնելով, հարազատներուն ուղղուած մխիթարանքի արտայայտութիւններով՝ վեր առաւ հանգուցեալին կատարած երախտաշատ աշխատանքը ի նպաստ Յեղասպանութեան ճանաչման եւ Հայ Դատին:

Սրբազան Հօր կ'ընկերանար Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Աշոտ Քիւյ. Գամպուրեան:

PRELATE PARTICIPATES IN FUNERAL SERVICE FOR DR. J. MICHAEL HAGOPIAN

On December 10, 2010, award-winning filmmaker Dr. J. Michael Hagopian passed away at the age of 97.

The funeral service was held on Wednesday, December 15th, in Thousand Oaks, CA.

The Prelate participated in the service and delivered the eulogy, in which he extolled the life of Dr. Hagopian and his contributions to the Armenian people through the Armenian Film Foundation and other arenas. The following is an excerpt from the eulogy:

"Dr. Hagopian lived his life for something bigger than himself. He lived and breathed to keep alive the memory of those who suffered the atrocities of the Genocide he himself survived. His contributions to the history of the Armenian people are truly invaluable and immeasurable, and his tremendous work is not only of great value today, it will remain a valuable tool for generations to come. Until his last days on this earth, he dedicated himself to this mighty project; and now, we owe it to him to make sure the work he started is completed."

Pastor of Holy Cross Cathedral Rev. Fr. Ashod Kambourian accompanied the Prelate.

WORLD DOCANDO FEDERATION-Ի ՁԵՆԱՐԿԻՆ



Կազմակերպութեամբ
Lnu Անճելըսի World
Docando Federation-ի
տնօրէնութեան,
Չորեքշաբթի, 22
Դեկտեմբերի երեկոյեան,
ճաշկերոյթ տօնախմբութիւն
մը տեղի ունեցաւ Կլենտէյլի
«Անուշ» ճաշարանին մէջ:
Ձեռնարկի
ընթացքին,
պատասխանատուները
գլահատեցին սոյն
Հաստատութեան փայլուն
աշակերտ մարզիկները:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Արժ. Ս. Վազգէն Թինյ. Աթմաճեան
ներկայ եղաւ ձեռնարկին եւ փոխանցեց Առաջնորդ Սրբազան Հօր
օրհնութեան գիրը:

WORLD DOCANDO FEDERATION YEAR-END EVENT

On Wednesday, December 22nd, 2010, the annual year-end event of the World Docando Federation was held at Anoush Restaurant in Glendale.

Rev. Fr. Vazken Atmajian attended the event, at the start of which he read the Prelate's letter of blessing and commendation.
